Ամառը YIC-ի հետ

2013 # 5

«Մշակույթների կամուրջում» երիտասարդական փոխանակման ծրագիր Հայաստանում

Գյումրու «Երիտասարդական Նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն Եվրամիության «Երիտասարդությունը շարժման մեջ» ծրագրի «Մշակույթների կամրջում» երիտասարդական փոխանակման ծրագրի շրջանակներում ս.թ. հունիսի 20-28-ը Վանաձոր քաղաքում հյուրընկալեց 24 երիտասարդի՝ Գերմանիայից, Իտալիայից, Հայաստանից եւ Վրաստանից:

Ծրագրի նպատակը երիտասարդներին հաղորդակցման տարածք և հնարավորություն տրամադրելն էր՝ մասնակից երկրների մշակույթին ծանոթանալու համար:

Ծրագրի խնդիրներն էին.

- Օգնել մասնակիցներին ճանաչելու այլ մշակույթներ, բացահայտելու նրանց ընդհանուր արժեքներն ու տարբերությունները՝ իբրեւ հասկացողության եւ հանդուրժողականության հիմքեր՝ ընձեռելով նրանց միասին ապրելու եւ աշխատելու հնարավորություն:
- Հակամարտող երկրների երիտասարդ ներկայացուցիչներին հաղորդակցվելու եւ միմյանց ճանաչելու հնարավորություն ընձեռել:
- Հարավային Կովկասի եւ Եվրամիության ներկայացուցիչ երկրների երիտասարդներին հանդիպելու եւ հաղորդակցվելու հնարավորություն տալ՝ շեշտը դնելով այն հանգամանքի վրա, որ Եվրոպան իր մեջ ավելի համապարփակ համայնք է ներառում, քան պարզապես Եվրամիությունը:
- Երիտասարդներին միջազգային մակարդակի վրա համագործակցելու հնարավորություն տալ եւ քաջալերել ապագայում նմանատիպ գործողություններ ձեռնարկելու ուղղությամբ /շեշտը դնելով «Երիտասարդությունը շարժման մեջ» ծրագրի վրա/:

Ինչորյա ծրագրի ընթացքում չորս մշակույթ ներկայացնող քսանչորս երիտասարդ հնարավորություն ունեցավ ներկայացնելու սեփական ազգային երաժշտությունը, պարը, ավանդույթներն ու սնունդը և ծանոթանալու մյուս երկրների համապատասխան մշակութային բաղադրիչներին: Երիտասարդները աշխատեցին միասին ինչպես մեկ թիմով, այնպես էլ որպես խառը խմբեր՝ ավելի մոտիկից ծանոթանալով միմյանց մշակույթին, առանձնացնելով մշակութային նմանություններն ու տարբերությունները: Ծրագիրը առաջնորդվեց ոչ-ֆորմալ կրթության սկզբունքներով՝ մասնակիցներին տալով արտահայտման լայն հնարավորություն: Ծրագիրը տեղի ունեցավ ճամբարային տարածքում, որտեղ իրենց ամառային հանգիստն էր անցկացնում 200-ից ավելի երեխա՝ Հայաստանի տարբեր տարածքներից: Մասնակիցները ծրագրի ավարտական միջոցառումը նվիրեցին երեխաներին՝ նրանց համար բեմադրելով հետաքրքրաշարժ մի ներկայացում՝ ուղեկցված բազմալեզու երգերով ու երաժշտությամբ:

Սոնա Սահակյան

Առաջիկա ամիսների ակումբները

Երեքշաբթի.

16:00 - Գերմանական մշակութային ակումբ (Ալեքս և Ջուդիթ)

Չորեքշաբթի.

16:00 - Անգլերենի ակումբ՝ միջին մակարդակ

(Սյուզի Մուրադյան)

Հինգշաբթի.

17:30 - Անգլերենի ակումբ՝ սկսնակների համար

(Սիրանուշ Մինասյան)

Ուրբաթ.

15:00 - Ֆրանսերեն լեզվի և մշակույթի ակումբ

(Թոմի Սադաշ)

Շաբաթ:

16:00 - Անգլերենի ակումբ՝ միջին մակարդակ

(Սյուզի Մուրադյան)

Մանրամասների համար:
https://www.facebook.com/www.yic.am

«Ներգրավում» երիտասարդական փոխանակման ծրագիր Հայաստանում

«Ներգրավում» միջազգային երիտասարդական փոխանակման ծրագիր: Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն /ԵՆԿ/ և «Լիխտենշտեյնի եվրոպական երիտասարդ առաջնորդներ» ՀԿ-ն Եվրամիության «Երիտասարդությունը շարժման մեջ» ծրագրի շրջանակներում ս.թ. հուլիսի 19-28-ը Գյումրիում հյուրընկալեց միջազգային երիտասարդական փոխանակման ծրագիր՝ նվիրված հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավմանը և Գյումրու հասարակության իրազեկության բարձրացմանը՝ հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների վերաբերյալ:

Ծրագրի շրջանակներում Գյումրիում հյուրընկալվեց 28 կամավոր եվրոպական 4 երկրներից՝ Հայաստան, Վրաստան,

Ավստրիա և Լիխտենշտեյն: Կամավորները կազմակերպեցին և իրականացրեցին մի շարք հանրային միջոցառումներ՝ բացօթյա ցուցադրություն, մշակութային երեկոներ, նկարազարդում՝ գրաֆիտի, շրջակա միջավայրի մաքրման աշխատանքներ և այլն:

Հուլիսի 26-ի երեկոյան ք. Գյումրիի Ֆորալբերգի փողոցում /Ավստրիական թաղամասի մոտ/ Հայկական Կարիտասի կողմից կառուցվելիք բազմակի հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների կենտրոնի տարածքում տեղի ունեցավ ծրագրի փակման միջոցառումը, որի ժամանակ մասնակիցները ներկայացրեցին թեմային առնչվող թատերական ներկայացում, սոցիալական հոլովակ և անվասայլակային պարտեզի գաղափարը: Սոցիալական հոլովակը հասանելի է հետևյալ հղմամբ. https://www.youtube.com/watch?v=gxvhz_jn2_k

Գուրգեն Բալասանյան

«Ուսուցում ավելի լավ ապագայի համար» միջազգային դասընթաց Հայաստանում

Ամեն տարի հազարավոր եվրոպացիներ նախապատրաստվում և լքում են իրենց երկրները Եվրոպական կամավորական Ծառայության համար՝ փնտրելով նոր արկածներ և հնարավորություն բացահայտել իրենց և աշխարհը: Ի՞նչ է ԵԿԾ-ն տալիս կամավորին իր հետագա կյանքի համար: Արդյո՞ք բոլոր կամավորները ունակ են միայնակ հաղթահարել իրենց ԵԿԾ-ի ընթացքը: Եվ ինչպե՞ս կարող է ԵԿԾ-ն ազդել երիտասարդի վրա: Սրանք ընդամենը մի քանիսն են այն հարցերից որոնք պատճառ

հանդիսացան այս դասընթացի կազմակերպմանը:

Երիտասարդական Նախաձեռնությունների Կենտրոն ՀԿ-ն հյուրընկալեց վեցօրյա միջազգային դասընթաց, որը նպատակ ուներ բարձրացնել մենթորության և ուսուցման որակը ԵԿԾ-ի շրջանակներում՝ ապահովելով երիտասարդ կամավորների ապագա աշխատունակությունը, հատկապես անապահով երիտասարդներինը:

Դասընթացը կենտրոնացած էր փոխանակման և կամավորներին իրենց ԵԿԾ-ի ընթացքում կայուն միջոցներով ուղղորդելու վրա՝ դիտելով կամավոր ծառայությունը որպես ոչ-ֆորմալ կրթության գործիք:

Դասընթացը հյուրընկալել էր 24 ներկայացուցիչների, 10 երկրներից՝ Հայաստանից, Պորտուգալիայից, Իսպանիայից, Բելառուսից, Վրաստանից, Ուկրաինայից, Մոլդովայից, Ռումինիայից, Լեհաստանից և Գերմանիայից:

Դասընթացը հիմնված էր ոչ-ֆորմալ կրթության հիմքերի վրա:

Դասընթացը որպես այդպիսին ծառայում էր որպես <<ապագայի ուսուցման>> մոդել:

Նելլի Մինասյան

«Կամավորություն+Գործողություն= Փոփոխություն» կամավորության համահայկական քարոզարշավ

«Ես կամավոր եմ» խորագրով ֆլեշմոբ: Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն, Քաուսթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ իրականացնում է «Կամավորություն + Գործողություն = Փոփոխություն» կամավորության համահայկական քարոզարշավը:

Քարոզարշավի շրջանակներում ՀՀ ողջ տարածքում հուլիսի 26–ին տեղի ունեցավ «Ես կամավոր եմ» խորագրով ֆլեշմոբը:

Ֆլեշմոբի ընթացքում ՀՀ 10 մարզում և Երևանում երիտասարդներն իրենց մարմիններով պատկերերեցին «Ես կամավոր եմ» նախադասությունից մեկ տառ: Արդյունքում, ՀՀ 10 մարզերում և Երևանում ֆլեշմոբի ընթացքում պատկերված տառերը համակցելուց հետո՝ պատկերվեց «Ես կամավոր եմ» նախադասությունը:

Օգոստոսի 30–ին Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնքում տեղի ունեցավ «Ի՞նչ է կամավորությունը» խորագրով նկարչության օրը: Միջոցառումը հանրային էր և բացօթյա: Պրոֆեսիոնալ և սիրողական նկարիչները, երիտասարդներն ու երեխաները, համայնքի ներկայացուցիչները և պարզապես անցորդները ներկա էին գունավոր օրվան, և բոլորը միասին փորձեցին նկարչության միջոցով պատկերել կամավորությունը ըստ իրենց պատկերացման և երևակայության: Մասնակիցները վայելեցին «գունավոր» օրը և փորձեցին իրենց բառերով բացատրել թե ինչ է կամավորությունը: Հսկայական պոստերը

վերջում լի էր «կամավորական» նկարներով:
Կամավորական ակցիան իրականացվում է «Կամավորություն + Գործողություն = Փոփոխություն» ծրագրի շրջանակներում:

Նելլի Մինասյան

«ԵրիտասարԴՈՒթյունն աշխատունակ է» միջազգային դասընթաց Հայաստանում

Երիտասարդների աշխատունակությունը Եվրոպայի առջև ծառացած ամենամեծ հիմնախնդիրներից է և հանդիսանում է գերտերությունների առջև ծառացած տնտեսական ճգնաժամի անմիջական պատճառն ու արդյունքը: Երիտասարդական աշխատանքի, կամավորության և երիտասարդների ներուժի հզորացման ոլորտում մեծ փորձ ունեցող Գյումրու Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն՝ ՀԿ-ն /ԵՆԿ/ և Լիխտենշտեյնի եվրոպական երիտասարդ առաջնորդներ՝ ՀԿ-ն անցկացրեցին 7-օրյա դասընթաց՝ ուղղված կամավորությանը՝ որպես երիտասարդների աշխատունակությունը բարձրացնող կրթական մեխանիզմի խրախուսմանը:
Դասընթացն անցկացվեց Դիլիջան քաղաքում ս.թ. օգոստոսի 1-8-ը և հյուրընկալեց 28 մասնակից եվրոպական 13 երկրներից: Այն ներկայացրեց կամավորության՝ որպես կրթական մեխանիզմի խրախուսման 3R մեխանիզմը, և թե ինչպես այն կարելի է վերածել աշխատունակության բարձրացման մասնիկի:
Ծրագրի խնդիրներն էին.
- Երիտասարդական ոլորտի աշխատակիցներին և երիտասարդ առաջնորդներին տրամադրել գիտելիք, հմտություններ և գործիքներ կամավորական աշխատանքի խրախուսման, պահպանման և ճանաչման վերաբերյալ: Ներկայացնել կամավորության՝ որպես կրթական գործընթացի համակարգված կազմակերպման մեխանիզմներ;
- Հետազոտել կամավորական աշխատանքի տեսակները, որոնք



հանգեցնում են կարողությունների զարգացման և աշխատանքային շուկայում մրցունակության բարձրացման;
- Գիտել եվրոպական տարբեր երկրներում կամավորության և աշխատունակության բարձրացման ոլորտում իրականացված լավագույն փորձով;
- Կամավորության և աշխատունակության բարձրացման ոլորտում ստեղծել Եվրամիության և հարևան գործընկեր երկրների քաղաքացիական կառույցների համագործակցության ցանց:
Դասընթացը հիմնված էր ոչ-ֆորմալ կրթության սկզբունքների վրա և նպաստեց ոչ-ֆորմալ կրթության ճանաչմանը դասընթացի ընթացքում վերջիններիս լայն կիրառման միջոցով:

Գուրգեն Բալասանյան

«Սպասումից վեր...» մուլտիմեդիա ցուցահանդես

«Սպասումից վեր. Պատմություններ հայ-թուրքական սահմանից» ցուցահանդեսը տեղի ունեցավ Երևանում՝Նորարար Փորձառական արվեստի կենտրոնում օգոստոսի 27-ից մինչև սեպտեմբերի 7-ը, ինչպես նաև Գյումրիի Ասլամազյան քույրերի պատկերասրահում սեպտեմբերի 10-ից մինչև սեպտեմբերի 15-ը:
Հրանտ Դինքի Հիմնադրամը, Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն, Galata Fotoğrafhanesi և Free Press Unlimited կազմակերպությունները համատեղ ներկայացրեցին «Սպասումից վեր. Պատմություններ հայ-թուրքական սահմանից» մուլտիմեդիա ցուցահանդեսը:
Թվով հինգ փաստագրական ֆիլմերը հանդիսանում են Ալեքսեյ Մանուկյանի, Անիլ Չիզմեսիոդլուի, Անուշ Բաբաջանյանի, Արիֆ Յամանի, Արմենուհի Վարդանյանի, Դենիզ Պեկիյիսսիի, Էրեն Այթուղի, Մարիաննա Վարդանյանի, Սոֆյա Դանիելյանի և Վոլկան Դողարի համատեղ աշխատանքը:
Հայ-թուրքական սահմանը, փակվելով 1993 թվականին, շարունակում է բաժանել մարդկանց, գյուղերը, երկաթուղին, երեխաների ծիծաղը և հիշողությունները: «Սպասումից վեր» ցուցահանդեսը պատկերում է Կարս և Գյումրի սահմանային քաղաքների միջև տարիներ շարունակ դադարեցված երկխոսությունը և կոչ անում բոլորիս լսել, խոսել և գործել սահմանից այն կողմ: Գյումրիում, Բայանդուրում և Ախուրյանում ֆիլմերի հեղինակները հանդիպեցին հերոսներին նկարահանումներից 2 տարի անց, զրուցեցին նրանց հետ և կիսվեցին ընդհանուր տպավորություններով:
Ցուցահանդեսի ներկայացումը ֆինանսավորվել է ԱՄՆ դեսպանատան կողմից, իսկ թվով հինգ փաստագրական

ֆիլմերը նկարահանվել են «Մուլտիմեդիա երկխոսության համար» ծրագրի շրջանակներում, որը հովանավորվել է

Նիդեռլանդների Թագավորության Գլխավոր Հյուպատոսարանի և Բրիտանիայի դեսպանատան կողմից: Ծրագրի նպատակն է ստեղծել բարենպաստ միջավայր թուրք և հայ երիտասարդ լուսանկարիչների համատեղ արտադրանքի համար՝ պատմությունները պատմել ու նոր հնարքներով բարձրացնել նրանց ձայնը և նպաստել երկու հարևան երկրների երկխոսությանը:

Գյումրիի ցուցադրությունից հետո ցուցահանդեսը ուղևորվեց Բելգիա, Բրյուսել:

Էսմարիդա Պողոսյան

ԵԿԾ՝ հանուն կայուն կրթվող հասարակության

ԵԿԾ ծրագիրը անց էր կացվում Հունաստանի Լեֆկադա կղզու վրա՝ ս.թ. մայիսի 02-ից հունիսի 16-ը: Ծրագրի հիմնական նպատակն էր ավարտել էկո տան կառուցապատման ավարտական աշխատանքները, որը հետագայում ծառայելու է երիտասարդներին:

Ծրագիրն ինքնին մեծ փորձ էր մեզ համար մի քանի առումներով. Լինելով ԵԿԾ համակարգող, հետաքրքիր էր տեսնել՝ ինչպես են համակարգվում նմանատիպ ծրագրերը գործընկեր կազմակերպություններում: Երբեմն զգում էի, որ շատ մեծ տեղեկատվության ենք տիրապետում ԵԿԾ-ի մասին, որը լավ էր մյուս մասնակիցների համար, բայց որը երբեմն կարող էր նյարդայնացնել կազմակերպիչներին:

Աշխատանքները, որ մենք պետք է անեինք, ամբողջովին նոր էր մեզ համար և բացարձակ կապ չուներ մեր մասնագիտության հետ: Մենք ավազով, կավով և չորացված խոտով կառուցում էինք էկո տան պատերը՝ ամբողջովին օգտագործելով մարդկային ֆիզիկական ուժը, հիմնեցինք արևային էներգիայի համակարգը և այլն:

Այդուհանդերձ, ծրագրի ընթացքում ձեռք բերած հմտությունները ավելի շատ վերաբերում էին առօրյա կյանքին, քան մասնագիտական զարգացմանը: Ամենակարևորն այն էր, որ մենք հասցրեցինք միանգամից մի քանի երազանք իրականացնել այս ընթացքում. 24 ժամ մոտոցիկլետով ճանապարհորդել, Վրանային կյանք ծովափին, Լողանալ ծովում բարձր ալիքների առկայությամբ. Փորձեք վերցնել առավելագույնը ձեր ԵԿԾ ծրագրից. Այն կարող է ձեզ համար լինել կամ ուղղակի կամավորական աշխատանք՝ ամրագրված համաձայնագրում, կամ մի ամբողջ արկած, ինչպես եղավ մեր պարագայում:

Գուրգեն Բալասանյան և Սոնա Սահակյան

«Առաքելության գնահատում, արդյունքների գնահատում» միջազգային դասընթաց Հունաստանում

Հունիսի 24-ից հուլիսի 5-ը ընկած ժամանակահատվածում մենք՝ Էսմարիդա Պողոսյանս ու Սիրանուշ Մինասյանը մասնակցել ենք դասընթացի՝ <<Առաքելության գնահատում, արդյունքների գնահատում>> թեմայով Հունաստանի Լեֆկադա կղզում: Դասընթացը կազմակերպվել էր Լեֆկադայում գործող Solidarity Tracks հասարակական կազմակերպության կողմից:

Դասընթացի հիմնական նպատակները գնահատման նոր մեթոդների և գաղափարների փոխանակումն էր, գնահատման արդյունքների վերլուծումը, ինչպես նաև գնահատման նոր կարողությունների զարգացումը: Վերջնական արդյունքը ոչ ֆորմալ կրթության գնահատման նոր մշակված ձեռնարկն էր: Ձեռնարկը կազմելու համար մասնակիցները բաժանված էին 4 խմբի և յուրաքանչյուր խումբ աշխատում էր ձեռնարկի մի գլխի վրա: Ավելի ուշ ամբողջ խումբը հավաքվում էր՝ քննարկելու աշխատանքային պրոցեսը և գտնելու այն բացթողումները, որոնք հետագա զարգացման կարիք ունեն:

Ձեռնարկն ամբողջությամբ պատրաստ լինելու ժամանակ կբաժանվի բոլոր այն կազմակերպություններին, որոնք աշխատում են երիտասարդների հետ և առնչվում են ոչ ֆորմալ կրթության ոլորտին: Ավելին, Լեֆկադայում մենք ունեցել ենք անմոռանալի օրեր՝ լի նոր փորձություններով ու

ուսումնասիրություններով և, իհարկե, զվարճանքը այդ օրերի անբաժանելի մասն էր: Խմբի մասնակիցները ներկայացնում էին տարբեր երկրներ և հանդիսանում էին տարբեր մշակույթի կրողներ՝ պատրաստ խոսելու և քննարկելու իրենց մշակութային առանձնահատկությունները:

Միջմշակութային երեկոն պլանավորված էր նախագծի առաջին իսկ օրը, որտեղ մասնակիցները ներկայացրեցին իրենց երկրները, խոսեցին իրենց ազգային ավանդույթների մասին, ոմանք նույնիսկ կրում էին ազգային տարազներ: Մենք համտեսեցինք տարբեր երկրների ազգային ուտելիքներն ու խմիչքները և դիտեցինք երկրները ներկայացնող տեսահոլովակները: Միջմշակութային երեկոյից հետո շատ մասնակիցներ ցանկություն հայտնեցին անձամբ այցելել Հայաստան և մի քանիսը նույնիսկ արդեն դիմել են Հայաստանում անցկացվելիք ծրագրերի:

Երեկոյան ազատ ժամերին ողջ խմբով գնում էինք սրճարան կամ ուղղակի մնում էինք հյուրանոցում և զրուցում տարբեր թեմաների շուրջ՝ մասնավորապես մեր երկրների առանձնահատկությունների մասին: Դասընթացի վեցերորդ օրը նավարկություն էր կազմակերպված դեպի երեք հունական կղզիներ: Թերևս բառերով շատ դժվար է նկարագրել այդ կղզիների ողջ գեղեցկությունը, հրաշալի տեսարանն և հին հունական պատմության կենդանի շունչը: Ամենաազդեցիկն Իթակե կղզին էր, և մինչ գտնվում էինք այնտեղ, ամեն ինչ հիշեցնում էր Ոդիսականի պատմությունը:

Ամփոփելով՝ ուզում ենք մեր խորին շնորհակալությունը հայտնել Գյումրու ԵՆԿ ՀԿ-ին այս դասընթացին մասնակցելու և Լեֆկադան իր ողջ հմայնքով վայելելու բացառիկ հնարավորությունը ընդձեռելու համար:

Սիրով՝ Էսմարիդա և Սիրանուշ

«Երիտասարդությունը, ստեղծարարությունը և աշխատունակությունը մեկ հարթակում» երիտասարդական փոխանակման ծրագիր Անգլիայում

«Երիտասարդությունը, ստեղծարարությունը և աշխատունակությունը մեկ հարթակում» երիտասարդական փոխանակման ծրագիրը տեղի ունեցավ 2013թ.-ի օգոստոսի 2-13 -ն ընկած ժամանակահատվածում Մեծ Բրիտանիայի Գլոսթերշիր քաղաքում: Ծրագիրը իրականացվում էր նույն քաղաքում գործող ASHA կենտրոնի կողմից, որն ամեն տարի իրականացնում է այս ծրագիրը՝ ընդգրկելով հինգ պետությունների երիտասարդներ: Ծրագիրը ընդգրկում էր այնպիսի երիտասարդների, ովքեր ունեն սահմանափակ հնարավորություններ, մեծացել են ոչ լիարժեք ընտանիքներում կամ մանկատներում: Մասնակից երկրներն էին Ուկրաինան, Հունգարիան, Լեհաստանը, Հայաստանը և Մեծ Բրիտանիան: Յուրաքանչյուր երկրից մասնակցում էին 5-ական երիտասարդներ և 2 թիմ-ղեկավարներ:

Հայաստանի մասնակիցները ևս 5-ն էին. 3՝-ը Գյումրու Ֆրիտյոֆ Նանսենի անվան մանկատնից, և 2-՝ը Գայանե Առաքելյանս և Վոլոդյա Խաչատրյանը՝ «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպությունից:

Ծրագրի նպատակն էր օգնել երիտասարդներին հաղթահարել այն բոլոր դժվարությունները, որոնք կապված են աշխատունակության և կրթության հետ՝ օգտագործելով այնպիսի գործիքներ, ինչպիսիք են դրաման և բեմական հմտությունները: Խմբի փորձառու առաջնորդները, օգտագործելով տարբեր մեթոդներ, հնարավորություն տվեցին երիտասարդ մասնակիցներին ինքնուրույն ստեղծել մշակութային հարթակ, որտեղ բոլորը խաղի միջոցով հանգեցին մեկ վերջնական արդյունքի: Ծրագրում ընդգրկված թատրոնը, դրաման, ֆորում թատրոնը մասնակիցներին տվեցին ինքնաբացահայտման, ինքնադրսևորման հնարավորություն, ինչպես նաև մեկ բեմում տարբեր մշակույթները միավորելով՝ ստացան մեկ հրաշալի ներկայացում:

Ծրագիրը եզրափակվեց մեր՝մասնակիցներիս կողմից բեմադրված թատրոնով, որը կոչվեց << Անդեմ մարդը>>, ով կյանքի տարբեր իրավիճակներում հայտնվելով, ձեռք է բերում անհատին բնորոշ զգացմունքներն ու մարդկային արժեքները: Եվ միայն դրանից հետո է վերջինս դառնում հասարակության

լիակատար անդամ: Այն բեմադրվեց մոտակա թատրոնում, որտեղ հանդիսատեսը մեծ ոգևորությամբ և հաճույքով վայելեց ներկայացումը:

Ծրագրի ընթացքում մասնակիցները հնարավորություն ունեցան լինել Գլոսթեր, Բրիստոլ քաղաքներում, ինչպես նաև վայելել մարաքաղաք Լոնդոնի գեղեցկությունը:

Ծրագիրը շատ հաջողված էր, քանի որ մասնակիցները ճանապարհորդելուց, տարբեր մշակույթների հետ ծանոթանալուց բացի, ձեռք բերեցին նաև գիտելիքների և նոր հմտությունների մեծ պաշար:

Գայանե Առաքելյան

T.A.L.K. երիտասարդական փոխանակման ծրագիր Շվեդիայում

“T.A.L.K – Tolerance, Awareness’, Love and Knowledge” անունը կրող երիտասարդների փոխանակման ծրագիրը տեղի ունեցավ Շվեդիայի Անասետ քաղաքում 2013թ.-ի օգոստոսին: Մասնակից երկրներնէին՝ Շվեդիան, Հայաստանը, Վրաստանը, Պորտուգալիան և Իռլանդիան: Մեկ շաբաթվա ընթացքում

տարբեր երկրներից 30 մասնակիցներ միասին աշխատեցին և ունեցան քննարկումներ դիսկրիմինացիայի և եվրոպական տեղեկացվածության շուրջ: Ծրագիրը նպատակ ուներ բացահայտել և տարբերել հասարակության նորմերը որոնք հիմնված են ռասսայի, սեռի և անաշխատունակության վրա: Ծրագրի ընթացքում հայկական թիմը մյուս մասնակիցների հետ ուսումնասիրեց տվյալ նորմերը առաջարկեց մտքեր և իդեաներ թե ինչպես կարելի է պայքարել դիսկրիմինացիայի դեմ իրենց հասարակության մեջ՝ նպաստելով դիսկրիմինացիայի դեմ պայքարին և ներառելով բոլոր տեսակի մարդկանց:

Ուսուցման մեթոդը հիմնված էր ոչ-ֆորմալ կրթության վրա, և առաջադրանքները ներառում էին՝ թատրոն, զույգերով և փոքր խմբերով աշխատանքներ, խմբերի կառուցում, դեպքերի ուսումնասիրություն, սիմուլյացիաներ, բացօթյա դասախոսություններ, այցելություններ, քննարկումներ և արտիստիկ արտահայտություններ:

Նելլի Մինասյան

Գյումրիի Երիտասարդական ռադիո

Գյումրու «երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպությունը մեծ ուրախությամբ ձեզ է ներկայացնում իր նոր նախաձեռնությունը: Խոսքը Գյումրու Երիտասարդական Ռադիոյի մասին է, որը մեծ ուրախությամբ հանձնում ենք ձեր դատին: Գյումրու Երիտասարդական Ռադիոն առցանց հեռարձակվելու է ԵՆԿ Հկ-ի կողմից: Այս հետաքրքիր գաղափարը կյանքի կոչվեց մի խումբ ակտիվ երիտասարդների միահամուռ ուժերով: Երիտասարդական ռադիոյի նպատակն է հանրությանը ներկայացնել երիտասարդության շրջանում տեղի ունեցող իրադարձությունները, անդրադառնալ Գյումրիում ապրող ակտիվ երիտասարդների հետաքրքիր առօրյային, ծանոթացնել ձեզ եվրոպացի կամավորների հետ, նրանց ապրելակերպին և կատարած

աշխատանքին: Մեր աշխատանքային թիմը պարբերաբար ձեզ կներկայացնի ԵՆԿ ՀԿ-ի կողմից իրականացվող ծրագրերը, նախագծերը ու միջմշակութային միջոցառումները, ինչպես նաև այն ամենը ինչը նոր է և արդիական:

Կոնտակտային տվյալներ

Հասցե: Ջիվանի , Գյումրի 3105, Հայաստան

Հեռ.: (+374) 312 6 94 97

Էլ-հասցե: newsletter@yic.am

Վեբ-կայք: www.yic.am